ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԴՊՐՈՑ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԽՈՒՄԲ՝ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ՝Խմբային աշխատանքի դերը հինգերորդ դարի հայկական մշակույթ թեմայի ուսուցման ընթացքում

ՀԵՏԱԶՈՏՈՂ՝ պատմության ուսուցչուհի Անժելա Միքայելյան
Աբովյանի թիվ **7** հիմնական դպրոց

ՂԵԿԱՎԱՐ՝ՀԵՐՄԻՆԵ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Բովանդակություն

.Ներածություն 3

.Մեսրոպ Մաշտոց. 4

.Գրերի գյուտ. 6

.Թարգմանչաց շարժում. 8

.Եզրակացություն. 13

.Օգտագործված գրականության ցանկ. 14

Ներածություն

Ասում են ,թե դժբախտությունը հնարագետ է դարձնում մարդուն:Եվ դա որքան ճշմարիտ է անհատների, նույնքան և ավելի ազգերի համար:

Չորրորդ դարի վերջում Հայոց աշխարհը գտնվում էր ծանր վիճակում,կորցրել էր անկախությունը և բաժանված էր երկու հզոր պետությունների՝ Իրանի և Բյուզանդիայի միջև:Վերջիններս պարտադրում էին Հայաստանի պետությանն ու եկեղեցուն ոչ միայն իրենց օրենքները, այլև իրենց լեզուն:

ԵՎ ահա այս բռնության մեջ, Հայոց աշխարհի մտածողները հասկացան ,որ երկրի անկախությունը կորցնելուց հետո ,այնուամենայնիվ պետք է մնալ ինքնուրույն ,իսկ դրա համար անհրաժեշտ է շատ կարևոր գործոն՝ **Սեփական գիր,որով կարողանան պահպանեն Հայոց լեզուն, Հայ ժողովրդին:**

Որպեսզի ժողովուրդը չկորչի ,պետք է նրան տալ գիր և գիրք իր իսկ լեզվով,որպեսզի նա չդառնա հոգևոր մուրացկան ,այլ ապրի արժանապատվությամբ:

Եվ այս գիտակցությունը դառնում է խորին մտահոգություն,դառնում հրամայական պահանջ:Անձնվիրությամբ ,հայրենասիրությամբ գործին է նվիրվում ժամանակի լուսավոր բանագետ մարդկանցից մեկը՝ Մեսրոպը,որ դարերի մեջ անմահացավ որպես Մեսրոպ Մաշտոց:

Երկու տարվա անդադրում որոնումներն ու տքնությունը նկարագրել է 5-րդ դարի պատմիչ Կորյունը:

5-րդ դարի հայի գիտակցությունը վկայում է առաջին հերթին այն,որ Մեսրոպի գյուտը համարվել է հոգևոր ազատության ,ինքնության և առաջադիմության ազդակ:

Եվ Մեսրոպի գյուտն իրոք հեղաշրջում է հայ կյանքը,հիմք է դնում լուսավորության ու առաջադիմության և մանավանդ ամրապնդում է ազգային գիտակցությունը:

Հայոց աշխարհում նրա հնարած գիրը դառնում է ինքնապաշտպանության զենք ու վահան ,դառնում է հայ ժողովրդի հարատև գոյության երաշխիքը՝ապահովելով հայ ժողովրդի ինքնությունը:

Մեսրոպ Մաշտոց



Մեսրոպ Մաշտոցը ծնվել է Արևմտյան Հայաստանի Տարոն գավառի Հացեկաց գյուղում:Եղել է կիսազնվական Վարդանի որդին:Հայաստանում ստացել է հունական կրթություն:Տիրապետել է հունարենին, պարսկերենին, ասորերենին,վրացերենին:Մոտ 389թ հաստատվել է Արշակունյաց մայրաքաղաք Վաղարշապատում և երկրի հազարապետ Առավանի ղեկավարությամբ պաշտոնավարել արքունիքում որպես ատենադպիր,ապա անցել զինվորական ծառայության:394թ թողելով ծառայությունը և աշխարհիկ կյանքը ,դարձել է վանական:Նրա ճգնավայրերից մեկը եղել է Հայաստանի Երնջակ գավառի Մեսրոպավանիս գյուղի մոտակայքը:Աշակերտների ուղեկցությամբ կատարել է քարոզչական շրջագայություններ:Եղել է Գողթն գավառում,ապա տեղի իշխան Ծաբիթից ստանալով գործելու ազատ հնարավորություն, հիմնել է այնտեղ քրիստոնեական համայնքներ:

Գողթնում կատարած քարոզչությունը նրա մեջ հաստատեց հայրեն գիր ու գրականություն ունենալու կարևորությունը:

387թ երկու մասի բաժանված Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածները միմյանցից օտարանում էին:Պարսից գերիշխանությանտակ գտնվոց արևելյան մասում թեև պահպանվում էր հայոց թագավորությունը,բայց պարսկական ազդեցությունը գնալով մեծանում էր,գրագրությունը կատարվում էր պարսկերեն:

Երկրի արևմտյան մասում եկեղեցին ենթակա էր հունական եպիսկոպոսությանը,եկեղեցու և պետական լեզուն հունարենն էր:

Վերահաս էր դառնում հայության ձուլման վտանգը:

Արքունիքում պաշտոնավարելիս և հետո կանխազգացել է հայկական ինքնուրույն պետության մոտալուտ անկումը:

Նրա համար հայ դպրության հրատապ ստեղծումն ուներ հետևյալ նպատակները.

1.Հայացնել քրիստոնեական գրքերը,քարոզչությունն ու արարողությունները կատարել հայերեն:

2. Ստեղծել և զարգացնել մայրենի լեզվով գրականություն:

3. Հայությանը փրկել ձուլումից:

4.Ամրացնել երկրի քաղաքականապես 2 մասի բաժանված հատվածների հոգևոր,լեզվական և մշակութային միասնությունը:

Այս ծրագիրը ձևավորվում է Գողթնում :387թ կաթողիկոս դարձած Սահակ Պարթևը,որ միշտ եղել է ազգակենտրոն քաղաքականության առաջամարտիկ ,ունեցել է նույն մտահոգությունները:Գալով Վաղարշապատ,Մաշտոցը կաթողիկոսին հայտնում է իր ծրագիրըև ստանում լիակատար հավանություն:

Գումարվում է ժողով :Վռամշապուհ թագավորը հավանություն է տալիս նպատակին՝ հայտնելով ,որ Ասորիքում Դանիել անունով եպիսկոպոսի մոտ հայերեն գրեր կան :Ժողովի խնդրանքով թագավորը հայ գրերի նախանձախնդիր մի իշխանի ՝Վահրիճ անունով ուղարկում էԴանիելի մերձակից Հաբել երեցի մոտ:Վերջինս Դանիելից առնելով գրերը բերում է Հայաստան:Այստեղ հիմնում են դպրոցներ,Մաշտոցն ստանում է վարդապետի կոչում:

Մոտ երկու տարվա դասավանդումից հետո պարզվում է ,որ դանիելյան նշանագրերը անբավարար են ու անհարմար լեզվի վանկարկման և ուսուցման տեսակետից:

Սահակ Պարթևի երաշխավորությամբ թագավորի հրամանով նա իր աշակերտ-օգնականների հետ մի խումբ մանուկներ առած,ուղևորվում է Ասորիք:Լինում է Ամիդ,ապա Եդեսիա քաղաքներում:Մանուկների մի մասին ասորական կրթության է տալիս Եդեսիայում ,մյուսին ուղարկում ավելի հյուսիս՝ Սամոսատ հունարեն կրթություն ստանալու:

405թ ստեղծել է հայերենի հնչյունական համակարգը ճշգրտորեն արտահայտող ,ուսուցանելու, թարգմանելու և դպրություն ստեղծելու նպատակին լիովին հարմար նշանագրեր:Տառերի տվել է անուններ՝

Այբ, Բեն,Գիմ....

որոշել է նրանց թվային արժեքները ՝

Ա-1

Ժ-10

Ապա անցնելով Սամոսատ հունագետ Հռոփանոսի օգնությամբ կատարելագործել է տառերի գծագրությունը:Իր աշակերտներ Հովհան Եկեղեցացու և Հովսեփ Պաղնացու հետ սկսել է Աստվածաշնչից հայերեն թարգմանել Սողոմոնի առակները,որոնց սկիզբն է Ճանաչել զիմաստություն և զխրատ ,իմանալ զբանս հանճարոյ»:

Մաշտոցը նորաստեղծ գրերով վերադարձել է հայրենիք:Երկրում ծավալվել է թարգմանչաց շարժում,որը լուսավորական ,կրթական ընդարձակ ու երկարատև գործունեություն էր:

Թարգմանչաց շարժումը հիմք դրեց Թարգմանչաց տոնի ,որը հայկական մշակույթի պատմության ազգային-եկեղեցական կարևոր տոներից է:Այն խորհրդանշում է հայոց գրերի գյուտը,Աստվածաշնչի հայերեն առաջին թարգմանությունը,հայ դպրության սկիզբը:Հայ առաքելական եկեղեցին <<Սրբոց թարգմանչաց վարդապետացն մերոց» անվան ներքո տոնում է 6 թարգմանիչների `Մեսրոպ Մաշտոցի ,նրա ավագ ու կրտսեր աշակերտների `Եղիշեի, Մովսես Խորենացու, Դավիթ Անհաղթի ,Գրիգոր Նարեկացու,Ներսես Շնորհալու հիշատակը:

Հայերեն առաջին թարգմանական գրականությունը եղել է Աստվածաշունչը:Ֆրանսիացի գիտնական Լա Կրոզը այն անվանել է<<Թագուհի թարգմանչաց»:

Թարգմանչաց շարժումը ծավալվել է հայ գրերի գյուտից անմիջապես հետո`405թ-ին:Այն նպատակ ուներ թոթափել երկիրը հունական ազդեցությունից,հիմնել հայկական դպրոցներ,թարգմանել հոգևոր և աշխարհիկ գրականություն ,հայացնել եկեղեցական ծեսերն ու հիմնել ինքնուրույն հայալեզու դպրություն:

Շարժումը հետապնդում էր նաև որոշ պետական շահեր,հայոց գրերի ստեղծմամբ Արշակունիների թուլացած գահի պաշտոնական գրագրությունը հունարենից և ասորերենից պետք է անցներ հայերենի,իսկ հայալեզու դպրոցն ու գրականությունը հայալեզու եկեղեցու միջոցով պետք է նեցուկ դառնար հայոց պետականության և ժողովրդի ինքնության պահպանմանը :Բոլոր գործողությունները ղեկավարվում էին եկեղեցական և հոգևոր այրերի կողմից `արքա Վռամշապուհի անմիջական օժանդակությամբ:

Հայ գրերի գյուտից հետո մինչև 440-ական թթ ասորերենից և հունարենից թարգմանվել են մեծ քանակությամբ գործեր,բազմաթիվ վկայաբանություններ, վարքագրություններ,որոնք հիմքեր ստեղծեցին հայ ինքնուրույն՝ մեկնողական , աստվածաբանական–դավանական,իմաստասիրական ,պատմական գրականության ստեղծման համար:

Հայոց աշխարհում Մեսրոպի հնարած գիրը դարձավ ինքնապաշտպանության զենք ու վահան ,դարձավ հայ ժողովրդի հարատև գոյության երաշխիքը՝ ապահովելով հայ ժողովրդի ինքնությունը :

Այն ,ինչ չկարողացան անել հայոց արքաները զենքով ,այդ արեց Մեսրոպը իր հրեղեն տառերով:

Նա ոչ միայն փրկեց մեր ժողովրդին ողբերգական կործանումից , այլև խթանեց նրա կորովը՝անմեռ արժեքներ ստեղծելու:

Ու գիրը դառնում է ամենազոր:Գիրքը՝ ազգապահության գործոն:Գիրն ու գիրքը պահպանում ,զարգացնում են լեզուն ու մարդկանց:Կարճ ժամանակում այնքան է խորանում գրի և գրքի սերը ,որ ժողովուրդը , իր երախտագիտական մեծարանքի համար իր մծագործ հեղինակներին –Մեսրոպից մինչև Խորենացի ,Եղիշե, Նարեկացի-համարում են ՍՈՒՐԲ:

Քաղաքականապես անապահով, բռնի ձուլվելու վտանգին ենթական ժողովուրդը ,ապավինելով իր գրին ու գրքին ,թարգմանական գրականության հետ միասին ստեղծում է ինքնուրույն պատմագրություն ,գիտություն,հայրենասիրական գրքեր ու երգեր,որոնք և դարերի մեջ պահեցին մեր պապերի ինքնության և ազատության ոգին:

Մեր կախյալ պետականությունը կորցնելուց հետո ,հայոց լեզուն ու գիրքը փոխարինում են պետության :Մարդիկ հոգեկան մխիթարություն ու կորով են ստանում հայ գրքերից...և այդ է պատճառը,որ միջնադարի հայը գիրքը կտակում է իր ժառանգներին ,որպես մեծագույն արժեք,իսկ բարբարոս ասպատակների հափշտակած հայ գրքի համար ծախում է ամեն ինչ՝ այն գերությունից ազատելու:

Հավերժ փառք մեր անզուգական լուսավորչին:

Հայերեն այբուբենը կատարյալներից մեկն է աշխարհում :12-րդ դարից հետո այբուբենը հարստանում է ևս 2 տառով ,իսկ 1940թ արդեն առկա երկու տառի միաձուլմամբ ստեղծվում է ևս մեկ տառ,որը սակայն մեծատառ չունի:Գիտնականները հայոց այբուբենը համարում են աշխարհում ամենակատարյալ երեք այբուբեններից մեկը՝ վրացական և կորեական այբուբենների կողքին:

Խաչիկ Դաշտենց՝ ձոն Մեսրոպ Մաշտոցին.

Որ մեր լեզուն ,մեր երկիրը և մեր ոգին հայկական

Աշխարհային հողմերի դեմ կանգուն մնար մշտական ,

Ըստեղծեցիր մեր գրերը-մեր սրերը փրկության,

Ով դու զավակ բազմախորհուրդ աշխատավոր հայության:

Այդ գրերով մեր ոսկեբառ մատյանները գրվեցին,

Մեր երգերը թևեր առած աշխարհով մեկ ցրվեցին:

ՈՒՀՁ- Դասի պլան

Ուսուցիչ- Անժելա Միքաելյան

Առարկա՝ Հայոց պատմություն

Դպրոց ՝ Աբովյանի թիվ7 հիմնական դպրոց

Դասարան՝7-րդ

Ամիս ամսաթիվ՝ 20.09-26.09

Նպատակը՝

Ի՞նչ կկարողանան անել աշակերտները դասի ավարտին:

Թեման ՝ Մեսրոպ Մաշտոց ,Գրերի գյուտ

Նպատակը՝

Ներկայացնել Մեսրոպ Մաշտոցի գործունեությունը

Ցույց տալ գրերի գյուտի կարևորությունը

Արժևորել գրերի գյուտի կարևորությունը հայապահպանման գործում

Աշակերտի հմտություններ

Ժամանակի կառավարում

Թիմային համագործակցություն

ՏՀՏ գործիքների կիրառում

Ուսուցչի հմտությունները

Ժամանակի կառավարում

Անհրաժեշտ պարագաններ

Թուղթ, քարտեզ, ֆլիչարտ

Դասի բանալի բառեր

Գրերի գյուտ, Մեսրոպ մաշտոց, Սահակ Պարթև, թարգմանչաց տոն,

Գնահատում

Ընկալում ,ստուգում

Ինքնուրույն աշխատանք

Ուղղորդված աշխատանք

առանցքային կոմպետենցիան է ուղղված նպատակի ուսումնասիրությունը

1. Լեզվական գրագիտության կարողունակություն:
2. Սովորել սովորելու կարողունակություն:

Դասի սկիզբ-8 ր

Պրոեկտորին կցուցադրվի նկար ,որից հետո սովորողները կպատասխանեն հետևյալ հարցադրումներին



Ու՞մ եք տեսաք նկարում,

Ի՞նչի մասին է լինելու մեր այս օրվա դասը
Ի՞նչ դուք գիտեմ այս թեմայի մասին

Այդուհանդերձ ուսուցիչը նշում է դասի նպատակները

Նոր նյութի ներկայացում-8ր

Ուսուցիչը սահիկաշարով ներկայացնում է նոր նյութը ,վերջում տրվում է ընկալման ստուգման հարցեր:

Ի՞նչ գիտեք Մեսրոպ Մաշտոցի մասին

Ի՞նչպիսի նշանակություն ունի հայի գոյապահպանման համար գրերի գյուտը

Ի՞նչ գործունեություն էր իրականացնում Մեսրոպ Մաշտոցը

Գործնական աշխատանք-15 ր

Ուսուցիչը հրահանգավորում է սովորողներին բաժանվել խմբերի

Առաջին խմբին տրվում է

Բացատրել գրերի գյուտի նշանակություն

Արժևորել գրերի գյուտի նշանակությունը այսօր և վաղը.....

Կարևորել գրերի գյուտը որպես ազգապահպանման գործոն

Երկրորդ խումբ

Ներկայացնել Մեսրոպ Մաշտոցի դերը և նշանակությունը

Հիմնավորել թե ինչպիսի դերակատարում ունեցավ Մեսրոպ Մաշտոցը իր գործունեությամբ

Հրահանգները,

ունենալ ժամապահ, թիմի պատասխանատու, հրահանգավորող,

Այս ամենի համար ունեք 10-րոպե, իսկ ներկայացնելու համար 5 րոպե

Ինքնուրույն աշխատանք

Նկարագրել Մեսրոպ Մաշտոցի պատմական կերպարը, նրա առաջնորդական որակները:

Դասի ավարտ՝
Ուսուցիչը աշակերտների հետ անդրադարձ է կատարում դասի նպատակներին՝ հստակ քայլերով ներկայացնելով՝

- Դասի նպատակները
- Դասի նպատակներին հասնելու գործողությունները
- Ձեռք բերված գիտելիքի կարևորությունը և պատճառահետևանքային կապը

- Դասի որ հատվածում հասան և ինչ քայլեր ձեռնարկեցին՝ դրանց հասնելու համար :

Հարցադարան

- Ի՞նչ նոր բան այսօր իմացանք
- Ո՞ր տեղեկատվությունն էր ավելի հետաքրքիր
- Ի՞նչն էր դժվար
- Ի՞նչը խանգարեց աշխատանքին և ինչու՞

Եզրակացություն

Հայ գրերի գյուտը հայ ժողովրդի կյանքում ունեցավ պատմական մեծ նշանակություն:Մաշտոցյան գրերից հետո ծաղկեց ամբողջ հայ մշակույթը, կրթական գործը , մատենագրությունը,նոր թափ ստացավ հոգևոր գործը :Գրերի գյուտով ամրապնդվեց հայ ժողովրդի ինքնագիտակցությունը:Հայոց այբուբենը դարձավ մեր լինելիության ,ազգային վեհ գիտակցության ,գրականության վերելքի և բարձր ինքնագնահատականի բանալին:Նրանք դարձան յուրահատուկ

զինվորիկներ՝ պահպանելով դարերով ստեղծածը՝ ի լուր աշխարհի ազդարարելով հայի տեսակի մասին:

Սուրն է որոշում իրավունքի սահմանը:

Մեսրոպ Մաշտոց

Օգտագործված գրականության ցանկ

https://www.youtube.com/watch?v=MNsk_OOR7HA
https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%A5%D5%BD%D6%80%D5%B8%D5%BA_%D5%84%D5%A1%D5%B7%D5%BF%D5%B8%D6%81
https://akunq.net/am/?p=27729

https://www.dasaran.net/apps/wiki/view/id/6175
http://www.anunner.com/news/famous-and-unknown-armenians/%D4%BF%D5%88%D5%90%D5%85%D5%88%D5%92%D5%86

https://mocak.am/19960/%D5%A2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A5%D5%B2%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80-%D5%B4%D5%A1%D5%B7%D5%BF%D5%B8%D6%81%D5%AB-%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6/
https://www.lezu.am/?p=1191https://www.lezu.am/?p=1191